ՄԻ ԽՐԱՏ ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆՅՈՒՆ

Երբ դուք կլսեք, որ ամբողջ աշխարհ
Իր երկրի բերքը, արտադրությունքը...
Բյուր մաշինները, նոր հեռախոսը
Տանում է Ֆրանսիայի ամեն տեղ հռչակված
5 Համաշխարհային շքեղ հանդեսը,-
Դուք էլ, ի սեր Աստծո, հայ եղբայրք,
Աղաչում եմ ձեզ, քնած չմնաք,
Մտեք Հայաստան, առեք մի ման
Կրակ տված ձեր տների մոխրից,
10 Լցրեք լճերից՝ մի ուրիշ ման էլ՝
Ձեր մորթված խեղճ որդվոց արյունից...
...Այս ամենն էլ հավաքած բարձեք
Հայաստանի հին սայլակի մեջը
Ու կամաց կամաց սայլը քշեցեք
15 Դեպ Ֆրանսիայի աշխարհանդեսը
Տարեք դարսեցեք հանդեսի մեջը
Ու ասացեք. «Եղբայրք եվրոպացիներ,
Նայեցեք, մենք էլ Հայաստանիցը
Բերել ենք թուրքի ձեռքի պտուղներ»։
20 ...Ո՜հ, Եվրոպա, Եվրոպա, նայիր երկնքին,
Այնտեղ է հասել հայի աղաղակ...
Դու, որ ճիշտ պատկերն ես Լանգթեմուրին,
Էլ քրիստոնեի ինչո՞ւ ծածկել ես դիմակ...
Դու, որ քո կոպեկը բարձր ես դասում,
25 Քան թե չորս միլիոն խեղճ ազգը հայոց,
Էլ ինչո՞ւ, ասա, ինչո՞ւ ես կրում
Դու «մարդասերի», «քրիստոնեի» անուն...